

## ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

**«Մաթեմատիկա» առարկայի ընդունելության թեստը բաղկացած է 20 առաջադրանքից:**

**1-15-ը ընտրովի պատասխանով առաջադրանքներ են՝ նպատակաուղղված աշակերտների հենքային գիտելիքների ստուգմանը, որոնք համապատասխանում են հանրակրթական դպրոցի ծրագրի նվազագույն պահանջներին: Ընտրովի պատասխանով առաջադրանքներից յուրաքանչյուրի համար տրված է պատասխանների 4-ական տարբերակ, որոնցից ճիշտ է միայն մեկը:**

**16 - 20-ը ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ են, որոնց կատարումը պահանջում է մաթեմատիկայի տարբեր բաժիններից ունեցած գիտելիքների կիրառում: Դրանց համար պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքն առաջադրանքից հետո՝ նշված տեղում:**

**1 – 15 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:**

**16 – 20 առաջադրանքից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանը գնահատվում է 4 միավոր:**

**Թեստի առավելագույն գնահատականը 50 միավորն է:**

**Թեստի առաջադրանքները կատարելու համար հատկացվում է 120 րոպե:**

# Թեստ

## (VII դասարան)

### ՄԱՍ I. Ընտրովի պատասխանով առաջադրանքներ (1-15)

1.  $x$ -ի  $n^{\circ}$  ր արժեքի դեպքում  $(8 \cdot x + 5)$  արտահայտությունը կունենա 29 արժեքը:

1)  $-3$

2)  $3$

3)  $-2$

4)  $\frac{3}{2}$

2. Ինչքան  $^{\circ}$  վ է 15 մ 84 սմ-ը փոքր 4218 սմ-ից;

1) 22 մ 50 սմ

2) 16 մ 17 սմ

3) 26 մ 34 սմ

4) 15 մ 60 սմ

3.  $\Omega$  ր թիվը պետք է գումարել  $8\frac{3}{11}$  -ին, որպեսզի ստացվի 1:

1)  $-\frac{2}{35}$

2)  $-7\frac{3}{11}$

3)  $-\frac{12}{35}$

4)  $-4\frac{2}{5}$

4. Երկու թվերի գումարը 220 է: Թվերից մեկը մյուսից 4 անգամ մեծ է: Գտե՛ք այդ թվերը:

1) 160; 60

2) 176; 44:

3) 140; 80;

4) 180; 40

5. Գտնել 4 հայտարարով բոլոր կանոնավոր կոտորակների արտադրյալը:

1)  $\frac{1}{8}$

2)  $\frac{1}{16}$

3)  $\frac{3}{32}$

4)  $\frac{7}{32}$

6. Երբ մտապահված թվին գումարեցին 7 և արդյունքը բաժանեցին 5-ի, ստացան 8:  
Ի՞նչ թիվ էր մտապահված:
- 1) 22                                      2) 47                                      3) 33                                      4) 10
7. Ունենք 63 կգ պղնձի և 27 կգ արծաթի համաձուլվածք: Քանի՞ տոկոս է պղինձը այդ համաձուլվածքում:
- 1) 90                                      2) 70                                      3) 30                                      4) 10
8. 9 դր 5 սմ մեկ մետրի  $n^{\circ}$  ը մասն է կազմում:
- 1)  $\frac{905}{100}$                                       2)  $\frac{950}{100}$                                       3)  $\frac{95}{1000}$                                       4)  $\frac{95}{100}$
9. Քառակուսու պարագիծը 240 սմ է: Գտե՛ք նրա մակերեսը:
- 1) 10 սմ<sup>2</sup>                                      2) 3600 սմ<sup>2</sup>                                      3) 1800 սմ<sup>2</sup>                                      4) 1000 սմ<sup>2</sup>
10. Երկու թվերի գումարը 81 է, իսկ տարբերությունը՝ 17: Գտե՛ք այդ թվերը:
- 1) 45; 21                                      2) 60; 21;                                      3) 49; 32                                      4) 52; 37

(11-12) Գտնել արտահայտության արժեքը.

11.  $\left(\frac{3}{7} - 1\frac{1}{6}\right) \cdot 8 + \frac{4}{7},$

1)  $\frac{7}{32}$

2)  $\frac{2}{35}$

3) 2

4)  $-5\frac{1}{3}$

12.  $(56,37 - 43,21) : 10 - (2,36 - 2,01) : 100$

1) 2,3125

2) 0

3) 1,3125

4) -1.15

(13-15) Հավասարումներ և անհավասարումներ:

13.  $7 \cdot (3 - x) + 4 \cdot (x + 2) = 8$

1) 0

2) 3

3) -1

4) 7

14.  $2x - \frac{5}{6} = -1\frac{1}{3}x + 1$

1)  $-\frac{3}{20}$

2)  $\frac{11}{20}$

3)  $\frac{21}{25}$

4)  $\frac{3}{5}$

15. Ո՞ր բնական թվերն են  $-1 \leq x \leq 7\frac{3}{5}$  անհավասարման լուծումները:
- 1) 1;2;3;4;5;6                      2) 0;1;2;3;4;5;6                      3) 1;2;3;4;5;6;7                      4) 0;1;2;3;4;5;6;7

**ՄԱՍ II. Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքներ (16-20)**

**(16-20) Առաջադրանքների կատարման համար յուրաքանչյուր առաջադրանքներից հետո պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել լուծման ամբողջ ընթացքը:**

16. Տրված է ABC եռանկյունը: Նրա AB կողմը 3 սմ-ով մեծ է AC կողմից, իսկ BC կողմը 2 սմ-ով մեծ է AB-ից: Գտե՛ք ABC եռանկյան կողմերի երկարությունները, եթե նրա պարագիծը 29 սմ է:

Պատ.՝-----

17. Նավակը գետի հոսանքի ուղղությամբ 90 կմ ճանապարհին անցնում է 5 ժամում, իսկ հոսանքին հակառակ ուղղությամբ 42 կմ ճանապարհը՝ 3 ժամում: Կանգնած ջրում նավակը քանի՞ ժամում կարող է անցնել 64 կմ ճանապարհը:

Պատ.՝ -----

18. Երկու բանվոր, միասին աշխատելով, կարող են աշխատանքը կատարել 12 օրում: Քանի՞ օրում նրանցից առաջինը միայնակ կկատարի այդ աշխատանքը, եթե երկրորդն այն կատարում է 18 օրում:

Պատ.՝ -----

(19-20) Նույն արտադրողականությամբ աշխատող 4 օպերատոր 4 օրում մուտքագրում են 480 էջ:

19. Քանի՞ էջ է մուտքագրում 7 օպերատորը 7 օրում:

Պատ.՝ -----

20. Քանի՞ օպերատորը կարող է 450 էջը մուտքագրել 5 օրում:

Պատ.՝ -----